

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլ. Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և առն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.



Նատալիա Տարեկան Երեւանի և իշխանուհի Սարգիսի Սարգիսի Արա- մէլիքեան, սրտի ցաւով յայտնելով իրանց մօր ԿԱՏԱՐԻՆԵ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԼՈՐԻՍ- ՄԷԼԻԲԵԱՆԻ մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել հանգուցեալի յուզարկաւորութեան հանդիսին, իշխ. Թուամանեանի տնից (Բարիա- տինակայա փողոց), դէպի վանքի մայր-եկեղեցին, այսօր, երեքշաբթի, հոկտեմբերի 15-ին, առաւօտեան 10 ժամին:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Պրոֆէսոր Բուբլի վերսով. — ԵՐԵՎԱՆԻ ՏԵ- ՍՈՒԹԻՒՆ. Երեւանի քաղաքի դպրոցի ակադ- լիքներ լուրեր. — ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պո- տի յունաց պատրիարքի առաջիկայ ընտրութիւ- նը. Արտաքին լուրեր. — ԽԱՌԻՆ ԼՈՒԹԵՐ. — ՀԵՌԱ- ԳԻՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅԱՍԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱ- ՆԱՍԻՐԱԿԱՆ. Էվէլինա.

ՊՐՈՖԵՍՈՐ ԲՈՒԻՈՒՅ ՎԻՐՍՈՎ

Պրոֆէսոր Բուբլի վերսով, որի եօթա- նասնամեայ յօբելեանը այս օրակէս տօնում է ոչ թէ միայն Գերմանիան, բայց և ամ- բողջ քաղաքակիրթ աշխարհը, ծնվեց հոկ- տեմբերի 13-ին, 1821 թին, Պոմերանիայի Շիֆելթէյն քաղաքում: Նա իր գիմնադիա- կան ուսումը կէսկնում աւարտելուց յետոյ, մտաւ Բերլինի համալսարանի բժշկական ֆակուլտետը, որտեղ 1843 թին աւար- տեց իր ուսումը: Արդէն 1846 թին նա Բերլինի «Շարիտէ» անունով հի- ւանդանոցում ընդունվեց որպէս հիւանդա- նոցի գլխաւոր բժշկի օգնական, իսկ 1847 թին սկսեց դասախօսութիւններ կարգա- բերել համալսարանում: Սակայն շուտով Սկանդինավիայի պրոֆէսորի հրաւերով, վերսով անցաւ վերջբերողի համալսարանը, որպէս անատոմիայի պրոֆէսոր: Այդտեղ նրա գոր- ծունէութիւնը շատ բեղմնաւոր էր: Քանի մի տարուց յետոյ նա կրկին վերադարձաւ Բերլին, որտեղ ընդունեց պատմութեան անատոմիայի ամբիօնը:

Վերսովին է պատկանում այն նոր սիս- տեմը պատմութեան մէջ, որը «ցելուլեր» սխեմայի անունով յեղափոխեց իր ժամա- նակին պատմութեան հիմնական ամբողջ սկզբները, տալիս ու վրա անելով այն հնարած հայեացքները, որոնք տիրում էին մինչև նրա գիւտը ֆիզիոլոգիայի և պա- թոլոգիայի ուսումնարաններին մէջ: Վերսով յայտ-

նի է ոչ թէ միայն որպէս ֆիզիոլոգ և բժիշկ, որպէս անատոմ և անթրոպոլոգ, բայց և որպէս ազգագրագէտ և հնագէտ: Նա իր կենքի ընթացքում քանի մի ան- զամ ուսումնական ծանապարհորդութիւն- ներ արեց դէպի արեւելք, այցելեց Գոլոմա- տան, Եգիպտոս, Կովկաս և Անդրկովկաս: Նա յայտնի, այժմ հանգուցեալ, Շիֆման հնագէտին օգնում էր Տրոյադայում ուսում- նական փորութիւններ անելու, նա մի քանի անգամ ուղևորվեց Նորվեգիա և Սպանիա, այդ երկրներում բորոտութիւն ապրած սարսափելի հիւանդութիւնն ուսումնասի- բելու համար:

Սակայն Բուբլի վերսով իր կենքի ընթացքում չը բաւականացաւ միայն բուն գիտնական զբաղմունքներով. նա մի և նոյն ժամանակ հանդիսացաւ և որպէս հասա- րակայ գործիչ, որպէս քաղաքային և քա- ղաքական գործիչ: Երեսուն տարի շարու- նակ նա Բերլինի քաղաքային վարչութեան անդամ էր և Գերմանիայի մայրաքաղաքը պարտական է նրան բազմաթիւ օգուտէս ծրագրերով, որոնք դուրս բերված լինե- լով, գործնականութեան մէջ տուեցին աչքի ընկնող պտուղներ, նշանաւոր կերպով նպաստելով քաղաքի հասարակական և ա- ռողջական վիճակի բարւոքման:

Սյր բաւական չէ. հռչակաւոր է ժին Ռիտերի հետ միասին վերսով տարիների ընթացքում պարագլուխ էր գերմանական ազատամիտ քաղաքական կուսակցութեան և գերմանական Բէյլստատում փառաւոր կերպով առաջ էր մղում Ժողովրդական ի- բրւանքների և ինքնավարութեան դադա- փարի պատերազմը ընդդէմ Բիսմարկի մեռ- ցնող քաղաքականութեան:

Վերսով որպէս ուսումնական հռչակ ունի ոչ թէ միայն իր հայրենիքում, բայց և ամբողջ քաղաքակիրթ աշխարհում:

Որքան մեղ յայտնի է, եւրոպական բոլոր երկրներին, միայն ժամանակակից Գերմա- նիան և Անգլիան ծնեցնում են Վերսովի,

Հելմհոլցի, Հոլմբորտի, Գլադստօնի և Գար- վիլի պէս բազմակողմանի զարգացած մար- դիկ, կամ աւելի լաւ է ասած՝ գրեթէ ա- մենագէտ մարդիկ...

Եւրոպական բոլոր երկրները ուղարկե- ցին Բերլին իրանց ներկայացուցիչներին եօթնասնամեայ Վերսովին ողջունելու հա- մար. կային այդտեղ Ամերիկայից, Անգլիա- իից, Շվեդիայից, Նորվեգիայից, Սպանիա- իից, Հոլանդիայից, Ռուսաստանից, Իտա- լիայից, Գոլանտանից եկած պատգամաւոր- ներ, որոնք եկել էին Բերլին վերսովի բեղմ- նաւոր և բազմակողմանի գործունէութիւնը շնորհաւորելու, — միայն Ֆրանսիան բացա- կայ էր այդ համամարդկային ուսումնական և քաղաքական տօնախմբութիւնից:

Գերմանական Բէյլստատից ընտրված պատգամաւորութիւնը ներկայացնելով Վեր- սովին մի փառաւոր ուղերձ և արծաթից շքանշան մի սիւն, պատգամաւորութեան պա- րագլուխ Ռիտեր, զիմեով Վերսովին, ա- սեց նրան. «Իբրեւ սիւն ձեր զինակիցների շրջանում, դուք միշտ ցոյց էք տուել ձեր հայրենակիցներին այն ճանապարհը, որով կարելի է գտնել ճշմարտութիւնը և որը տանում է դէպի ձեր հայրենակիցների բա- րօրութիւնը»:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇՈՒՇՈՒ ՐԵԱԼԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱԿՏԸ

Ամսիս 1-ին, երեքշաբթի օր, Երեւան կատար- վեց մի ուսումնական հանգէս. այդ օրը տօնվում էր Երեւանի քաղաքի դպրոցի տաս- նամեայ պ. Խանդամիրեանի կառուցած նոր թատրոնական դահլիճում, որը լի էր խուռն բազ- մութեամբ: Երեւանի ներկայ էին միջի այլոց Կարապետ Լալայեան, Ալվազեան, Ռիդա-Վոլի- Միրզա, պարսից շահադէն, բազմաթիւ տիկի- ներ և տեղական պաշտօնեաները:

Հանդէսը սկսվեց ժամը 11-ին ուսումնական քահանայի մի կարծ ճառով և աղօթքով: Նրանից յետոյ բնական դպրոցի աշակերտների երաժշ- տական երգերի խումբը գերմանացի ուսուցիչ Ռեյսերի առաջնորդութեամբ նուագեց և երգեց «Вожде Царя Храни»: Ապա դիւրեկտոր պ. Տարա- սովի հրաւերով սրբաշան Սովազեան, ամբիոն բարձրանալով, մօտ 3/4 ժամ խօսեց: Բնարան ու- նենալով «գործի սկիզբը գործի կէսն է» խօսքը, սրբազանն ասեց, որ երբ 10 տարի առաջ նա,

այն ժամանակ առաջնորդական փոխանորդ, հրա- ւիրվեց ներկայ գտնվել բնական դպրոցի բաց- ման և ինքն օրհնեց բացումը, այն ժամանակ Երեւանի հասարակութիւնը կապվածով և անվտա- հուցեամբ էր վերաբերվում դէպի նորաբաց հաս- տատութիւնը, չիմանալով յարատեւութիւն կունե- նայ նա, թէ ոչ: Սկզբում հասարակութիւնը սառն վերաբերվեց, զրացաւ կանոնաւոր կերպով տալու իր տուրքը, որ քաղաքը յանձն էր առել և խոս- տացել: Բայց շնորհիւ բարեբարների, այն ան- ձանց, որոնք կարապետ էին եղել, աշխատել, միջնորդել և ձեռք բերել Երեւանի բնական դպրոց բանաւոր արտօնութիւնը և իրաւունքը, դպրոցը բացվեց. քանի քանի անգամ ուրիշ քա- ղաքներ, Երեւան և Ալեքսանդրօպոլ, իմանալով որ Երեւանի դպրոցը և դպրոցի մասին յանձն առած խոստումը կատարելու, առաջարկներ արեցին բարձր կառավարութեան տեղափոխել այդ դպ- րոցը իրանց քաղաքը, խոստանալով կրկնակի տալ և բոլորովին ապահովել դպրոցը. քիչ էր մնացել, որ Երեւանի կողմէն այնքան տարիների աշխատութեամբ ձեռք բերած իրաւունքը, բայց շնորհիւ Ժողովրդի հասկացող մասի ջանքերի, Երեւանի չենթարկվեց այդ դժբաղդութեան: Դրա- րոցն սկսեց հետզհետէ բարգաւաճել շնորհիւ ու- սումնարանական վարչութեան, հիմն բռնեց և աճաւ այսօր Երեւանի տօնում է նրա դպրոցեան ա- ռաջին տասնամեակը և թխաւորվում է երկրորդ տասնամեայ շրջանի մէջ մտնելու ճաս տարի ա- ռաջ, երբ Երեւան փողոցներում յայտնվում էր գիմնազիստի կամ ուսանողի համազգեստով մի պատանի, նա թվում էր մի արտակարգ երեւոյթ, և մատով էին ցոյց տալիս նրան, բայց այժմ, բնական դպրոցի շնորհիւ, երբ արդէն 3—4 անգամ ուսումնաւարտ աշակերտներ է հանել և ուղարկել բարձրագոյն ուսումնարանները, այժմ Երեւան մատաղ սերունդը միջոց ունի բարձր ու- սում ստանալու և իր կրթութեամբ զարգարելու իր հայրենի քաղաքը: Ապա սրբաշանը յայտնելով, որ եթէ Երեւան հասարակութիւնը վայելում է մի այդպիսի արտօնութիւն և հնարաւորութիւն ունի կրթութիւն տալու, նա, այդ հայ հասարակութիւ- նը պարտաւոր է երախտապարտ լինել Օգոստոս- փառ Կայսր Ալեքսանդր III-ին, որը հաւասարա- պէս և անխտիր իր պաշտպանութիւնը և բարե- բարութիւնը տարածում է իր բոլոր հպատակ ազգերի վրա, պարտաւոր է շնորհակալութիւն արտայայտել և ուսումնարանական շրջանի հոգա- բարձու պ. Երեւանի, դպրոցի զիւրեկտոր Տա- րասովին և ինսպեկտոր Հիմանովիկուն, որոնք ըստ

թիւնը, ինչպէս զուարթ և անհոգ երգում են հա- զարաւոր թուշուներ մեր գլխին սփռված ան- տառի կամարի տակ... Իսկ դուք, որ դեռ այդքան ջանք եք, այդքան գեղեցիկ, դուք, որ կարող էք դեռ սերել և ուրիշին անսահման սեր ներշնչել, — դուք ապարդիւն կերպով և միայն ձեզ վնասե- լով անդադար լաց էք լինում այն կորուստների մասին, որոնց այլ եւ չէք կարող վերադարձնել... Պէտք է լաց լինել, Երեւան Նիկոլայեւի, կենդանի և տանջվող մարդկանց վրա, — իսկ մեռածները հօ չեն տանջվում այլ եւս...

— Ալեքսանդր Խանովիչ, դուք շատ պահան- ջող էք, բարեկամ, ընդմիջեց նրան ջանքի կի- նը... Համբերեցէք փոքր ինչ, գուցէ եւ էլ մի օր զուարթ և ուրախ կը լինեմ, քանի որ, ինչպէս ասում են, ժամանակը ամեն ինչ բուժում է, բայց մի մոռացէք, որ եւ դեռ նոր եմ կորցրել ինձ համար երկու ամսնալիսն- զազին արարածներ, և այսօր տյտեղից դէպի հեռու հայրենիքս հեռանալով, եւ թողնում եմ ձեզ գեղեցիկ Միջերկրական ծովի ափում՝ երկու գե- րեզմաններ...

Ջանքի կինը սկսեց աւելի էլ լաց լինել, սկսեց հեկեկալ...

Եւ վերկացաւ պեղիցս և ուղղակի կանգնելով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՎԵԼԻՆԱ

Միւս օրը, լուսադիմի մեր հիւանդը վախճա- վեց: Թաղման հանդէսի միւս օրը, եւ և իւմասով սկսեցինք համոզել ջանիլ այրիին փոքր ինչ դուրս գալ, ցրվել, մաքուր օդ չնել, գնալ մեղ հետ մանգալ դիւղաքաղաքից դուրս: Վերջապէս կա- թողացանք համոզել նրան գնալ մեղ հետ ծովի ափում գտնվող մօտակայ ձիթենու անտառը: Հանելով անտառը, եւ և իւմասով նստեցինք խոտի վրա, մէջքը մէջքին դէմ տալով, իսկ տիկի- նը մնաց կանգնած, յենվելով մի ստուերախիտ ձիթենու հաստ բունին: Երեկոյն հրաշալի էր. դեռ արեգակը մայր չէր մտել և իր վերջին ճառագայթ- ներն արձակելով, ներկում էր ծովն ու ցամաքը ալ-կարմիր գոյնով: Ծովը կատարելապէս հան- դարտ էր... Եւ ակամայ յիշեցի մի քանի օր սրանից առաջ եղած փոթորիկը, երբ եւ Նիցցա-

յից դէպի Ջիւնովա ռոգնաւում էր գալիս... Յան- կարծ ինձ թվաց որ շատ և շատ ժամանակ էր անցել այն օրից յետոյ...

Ջարմանալի է որ երեքս էլ միատեղ ժողովված, չէինք էլ խօսում միմեանց մէջ... Եւ ի՞նչ հարկ կար խօսելու... Մեր փոխադարձ մտքերը մենք երեքս էլ լաւ էինք հասկանում. իւրաքանչիւրի ներքին աշխարհը ներդաշնակվում էր միւսի ներ- քին աշխարհին... Երեքս էլ իրար կատարելապէս օտար, — կարծես ազգական էինք դարձել, այն աստիճան համերաշխ էր մեր բոլորիս հոգեկան տրամադրութիւնը: Ամեն մէկը մեղանից երկու- մնացածների համար համ օտար էր, համ էլ շատ նոր ծանօթ, — սակայն բոլորիս հոգեկան տան- ջանքների միամեմոնութիւնը այս բօլիս ստեղ- ծել էր մեղանից կարծես մի ընտանիք...

Այո, բնութիւնը հրաշալի էր, եղանակն էլ մեղմ և զով...

Միայն հարաւում կարելի է տեսնել հակասու- թիւններից հիւսված հրաշալի ներդաշնակութիւն... Մոյշ կապոյտ հանդարտ ծով, բաց կապոյտ եր- կինք, ծովերի ժայռերի կարմիր գոյնը, ձիթենու անտառի մոյշ կանաչը, հիւսիսի կողմը գծագրվող Ալպեան սարերի մանիշակագոյն կօծուրները, — այդ բոլորը լուսաւորվում էր մայր-մտնող արեգա-

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ծախվում է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

«ԽԼ-Կարապետ» վեպը 1 ր., «Շուշան ողբերգություն» (օպերայի համար) 1 ր.:
Մամուլի տակ է և մինչև նոյեմբերի սկզբները լցյա կը տեսնի 400—650 մեծա-
դիր երեսներով բաղկացած

ԱՆՄԱՍ

Վեպը թիւընթացիկ ՆՈՐԱԳՈՑՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ շարունակվում
է ըստ 50 կողմի լցյա տեսնելուց յետոյ կը լինի:

Օտար քաղաքացի կարող են գիմել БАКУ Типография Теръ-Оганесянцъ.

1—5

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուրբաթ, 18/30 հոկտեմբերի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ ERYMANTHE (ԷՐԻ-
ՄԱՆԹԵ) շոգենաւոր, նաւապետ MERLIN (ՄԷՐԼԷՆ) ղեկավար Կ. Պոլիս, Մարսէլ, Հալիք, ԼՕՆ-
ԴՕՆ, մանկով և միջանկեալ նաւահանգիստները:

Ագէնտները ԲԱԹՈՒՄԻՄ՝ ՄԱՆԱՎԱՋԻ, ԹԻՖԼԻՍԻՄ՝ ԳԵՈՐԳ ՀԵՃՈՒԲԵԱՆ ՀԵՃՈՒ-
ԲԵԱՆՅ, իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ՝ ԳՕԼԻՒՈՒՍՏ:

2—2

Մի պատուաւոր ընտանիք կամենում է իր մօտ պահել զինքն իր մանուկները՝ ա-
շակերտներ կամ աշակերտուհիներ: Ընտանիքի զաւակները—դուստրը՝ աւարտած է
Թիֆլիսի օրիորդաց դիմագիծին 8-րդ դասարանը, ընտանեկան դաստիարակչուհու և
ընտանեկան ուսուցչուհու ղեկավարով իսկ օրդին՝ առաջին գիմնազիայի 7-րդ դասարա-
նում, կարող են պատգամաւոր աշակերտներին և աշակերտուհիներին գիմնազիայի մինչև
4-րդ դասարան, նմանապէս կարող են պարագիւր նրանց հետ և հայոց լեզուից: Հաս-
ցէն հարցնել «Մշակի» և «Աղբիւրի» խմբագրատանը:

5—5

Մի ԵՐԻՏԱՍԱՐԳ յանձն է առնում թարգմանել հայերէն մատչելի պայմաններով
Փրանսերէնից, գերմաներէնից և անգլիերէնից: Ունենալով քանի մի ազատ
ժամեր պարտաւոր է դասաւանդել Փրանսերէնը և գերմաներէնը ցանկացողնե-
րին: Նախադասելի են առաւել նոր սկսողները:

Գիմել «Մշակի» խմբագրութեան:

10—10

ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՑ

„ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍԻՄ

Գաղաքի կենտրոնում, Գոլովինսկի
պրօպէկտի վրա: Գեղեցիկ և մաքուր
կահաւորված սենեակներ. օրը 60 կօ-
պէկից մինչև 5 ռուբլի. ամսով մեծ
զիջում է անվում:

Կերակուրները թարմ և համով:

НОВЫЕ НОМЕРА

„ДАНИА“

ВЪ ТИФЛИСѢ

ВЪ центръ города, на Головинскомъ
проспектѣ. Изящно и чисто меблирован-
ные номера отъ 60 коп. до 5 руб.
въ сутки; помѣсячно большая уступка.

Пища свѣжая и вкусная.

23—36

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւորի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ղեկավար ԲԱԹՈՒՄ, Հալիք
շարքի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած
ԵՒ ՓՈԽԱԳԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մանկով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պոլիս:

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱԿԵՐԸ ԳՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 11/23 սեպտեմբերի	—	ԱՆԱՏՈԼԻԱ	—	ԳԱՐԻԲԳ
— 25 սեպտ. (7 հոկտեմբերի)	—	ԱՐՄԵՆԻԱ	—	ՏԻՔԱԼ
— 9/21 հոկտեմբերի	—	ՍԻՐԿԱՍԻ	—	ԲՕՇԷԼ
— 23 հոկտեմբերի (4 նոյեմբերի)	—	ԱՆԱՏՈԼԻԱ	—	ԳԱՐԻԲԳ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ:
Տօմաթների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից ղեկավար Պարիզ իսկական գնից
պակսեցրած են:

Տեղեկութիւնների համար ծանապարհօրհների և բեռների մասին թող բարեհաճ
դիմել ընկերութեան ագէնտներին. ԲԱԹՈՒՄԻՄ՝ Կ. Գարանիօնին, Նաբերէժնայ
ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կ. Վիկտոր ԴՄԱՐՆՈՒՆ, Միջին-փողոցում, Նախկին գնեւորչի Տէր-Ասատուր
տանը, ԲԱԳՐԱՌՄ, Սամսոն Գիլդարովին, Կօլիւբակինսկայա հրապարակ, և ՆՕՎՈՐՈՍԻ
ՍԿՈՒՄ՝ Կ. Լուի Բընօին:

11—12 (Ե. շ.)

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող
խրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առևտրական հաշարարու-
թիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսուցիչներով համար:

Ս. ՄԱՆՈՒԵԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տօկոսների լիակատար աղւսակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար. 10/10-ից մինչև 120/0
վաճառվում է եղբայր Գոլիւբակների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ.
Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաբաղադրացի ղեկավար են վերջին հասցէով С. П. Ма-
нуэльянц.

Գինն է 1 ռուբլի: Փօստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի:

22—150

Z—B O U Q U E T : Z—ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԻՒՆ

ՆՈՐ, ՇԱՏ ԹԱՆԳԱԳԻՆ, ԲԱՅՑ ՇԱՏ ԵՒ ՆՈՒԲԻ ՕԾԱՆԵԼԻԲ

Բ. ԿԵՕԼԼԷՐԻ և ԸՆԿ. ԳՈՐԾԱՐԱՆԻՑ, ՄՕՍԿՎԱՑՈՒՄ

առաջարկվում է որպէս

ՌՈՒՍԱՑ ՊԱՐՏԻՄԵՐՈՐԱԿԱՆ ԱՐՀԵՍԵՒ ՆՄՈՒՇ

Ծախվում է գաւառներում բոլոր ամենալաւ մազաղիններում

5—5 (№ 3)

Լցյա տեսաւ և վաճառվում է Շուշի, Արթուրի մանցի գրավաճառանոցում
„ՎԵՐՁԻՆ ՎԵՐԲԵՐ“
պատմ. վեպ, I մաս, հեղինակութիւն ԼԵՕՒ ԳԻՐԻՐ 30 կօպ.: Նոյն տեղը վաճառվում
հեղինակի միւս աշխատութիւնները: Գիմել. ПУША, Книжный магазинъ А. Я-
рамынца.

2—5

ՀԱՃՈՒԵԿՁԻԹ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի

գ1-ն Հոկտեմբերի 1891

Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բաղուր և Բա- թումի բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բաղուր և Բա- թումի բաժն.	Ընդամենը
1. Կրամարիզ (առձեռն թղթադրամ).....	222,579—38	128,965—46	351,544—84	1. Հիմնական դրամադրութիւն.....	1,000,000 —	—	1,000,000
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	563,781—68	131,000 —	694,781—68	2. Պահուստի դրամադրութիւն.....	191,665—21	—	191,665
3. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստո- րագրութեամբ.....	2,522,970—50	1,121,666—84	3,644,637—34	3. Կրամարիզ աւանդներ՝	—	—	—
4. Զեղչ. մուրհ. մի ստորագր. ապահ. ապրանք.	—	—	—	ա) Պայմանաժամով.....	2,708,107 —	434,264 —	3,142,371
5. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	17,998—04	6,313—98	24,312—02	բ) Գրանցով.....	391,978 —	34,880 —	426,858
6. Փոխառութիւն գրաւակնումով՝	—	—	—	գ) Ընթացիկ հաշիւով հասարակ.....	1,065,077—17	877,282—68	1,942,359
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,136,010—56	465,587 —	1,601,597—56	դ) Ստորագր. ապահ. ապրանք.....	—	117,271—81	117,271
բ) Ստորագր. ապահ. ապրանք.....	207,803 —	12,010 —	219,813 —	4. Փոխառումն պետ. բանկային թիֆլ. բաժն.	—	—	—
գ) Ոսկւոյ և արծաթի.....	—	51,029 —	51,029 —	ապահովված զեղչիւթ մուրհակներով.....	—	—	—
4. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	379,053—84	1,970—01	1,970 01	5. Մանուկը ընթացիկ հաշիւ պետ. բանկի	—	—	—
8. Ոսկի և արծաթաձմանի փոխանակագրեր..	105,780—82	78,050—37	183,830—19	թիֆլ. բաժն. ապահով. տոկոս. թղթերով	—	—	—
9. Թղթակցներ՝	—	115—08	105,895—90	6. Թղթակցներ՝	—	—	—
ա) Նոյա հաշիւը (Loro).....	7,471,343—79	—	7,471,343—79	ա) Նոյա հաշիւը (Loro).....	7,424,381—06	—	7,424,381—06
բ) Բանկի հաշիւը (Nostro).....	6,517,202—39	—	6,517,202—39	բ) Բանկի հաշիւը (Nostro).....	6,635,688—64	—	6,635,688—64
10. Բաժնիների հաշիւը կենտր. վարչութեան հետ	600,197—59	—	600,197—59	Կենտրոն. վարչութ. հաշիւը բաժնի. հետ.	—	591,459—98	591,459—98
11. Բողոքած մուրհակներ.....	—	162,153—19	162,153—19	8. Բանկի բաժնետոմսերու անվճար կտրօն- ների բաշխը 1882, 1883, 1884, 1885, 1886, 1887, 1888 և 1889 թւերին.....	90,819—30	—	90,819—30
12. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւն- ներ.....	20,093—35	1,000 —	21,093—35	9. Չը վճարուած տոկոսներ, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողու- թեանց.....	7,900—60	—	7,900—60
13. Ընթացիկ ծախսեր.....	16,481 —	13,685 —	30,166 —	10. Ստացուած տոկոսներ և յանձնարարա- կաններ.....	91,524—50	36,604—51	128,129—01
14. Կահարարութիւն և սկզբնական ծախսեր.....	39,577—02	21,547—89	61,124—91	11. Փոխանցիկ գումարներ.....	161,269—91	90,042—05	251,311—96
15. Յետ ստացուելիք ծախսեր.....	2,761—94	3,314—50	6,076—44	12. Արդիւնք 1890 թ.:.....	64,336—46	21,068—14	85,404—60
	9,612—95	4,464—85	14,007—80		—	—	—
Բ. Ա.	19,833,247—85	2,202,873—17	22,036,121—02	Բ. Ա.	19,833,247—85	2,202,873—17	22,036,121—02